Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արտակ Ջումայան

2. Զբաղեցրած պաշտոնը

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2022 թ. փետրվարի 2-4, Ռուսաստանի Դաշնություն (Սոչի)

4. Հրավիրող կողմը

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն»

5. Գործուղման նպատակը

Համաժողովի հիմնական նպատակն էր անդրադառնալ ուռուցքաբանության ոլորտում քաղաքականության ու ռազմավարության խնդիրներին, ներկայացնել իրականացվող միջոցառումներն ու հետագա ծրագրերը, ինչպես նաև քննարկել ուռուցքաբանական հիվանդությունների բուժման նորագույն մեթոդներն ու ժամանակակից մոտեցումները:

6. Քննարկված թեմաները

Միջոցառմանը ներկայացվեց մոտ 60 զեկույց: Զեկուցողների ցանկում էին ուռուցքաբանության ոլորտում ճանաչված մասնագետներ Հայաստանից և արտերկրից: Համաժողովին մասնակցում էր մոտ 200 պատվիրակ՝ տարբեր առողջապահական կառույցներից: Այցի շրջանակներում քննարկվեցին ուռուցքաբանական հիվանդությունների դեմ պայքարի շրջանակում առաջացած խնդիրների լուծմանն ուղղված կարևորագույն հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Հայկական ուռուցքաբանություն. նպատակներ և իրականացման ուղիներ» խորագրով հայկական ուռուցքաբանական համաժողովին հանդես եմ եկել ողջույնի խոսքով՝ կարևորելով նման համաժողովների պարբերաբար կազմակերպումը, որոնք հնարավորություն են տալիս ընդհանրացնելու ոլորտի առաջատար մասնագետների փորձը, քննարկելու կուտակված խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ավարտին բոլոր մասնակիցների առցանց քվերակության միջոցով որոշվեցին երեք լավագույն զեկույցների հեղինակները, որոնք արժանացան գիտաթոշակի:

9. Առաջարկությունները

Միջոցառման մասնակիցները ջանքեր կներդնեն համաժողովի ընթացքում ձեռք բերած գիտելիքները Հայաստանում կիրառել: Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել մասնագետների փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2022 թ. փետրվարի 8

Recoverable Signature

X

ԱՐՏԱԿ ՋՈՒՄԱՅԱՆ

Signed by: DZHUMAYAN ARTAK 2801841080